ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի նոյեմբերի 20-ին

ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ

Հոդված 11. Անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնումը պետական սահմանով

Պետական սահմանով՝ անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անցման կետերով իրականացնում են սահմանապահ զորքերի զինծառայողները կամ մաքսային մարմինները անձանց Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու կամ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

Գրավադրված տրանսպորտային միջոցների բացթողնումն արգելվում է, եթե շարժական գույքի գրավի պայմանագրով ամրագրվել է գրավատուի կամ նրա լիազորած անձի կողմից տրանսպորտային միջոցի ելքի իրավունքի սահմանափակումը Հայաստանի Հանրապետությունից:

Տրանսպորտային միջոցի ելքի սահմանափակման և սահմանափակումը վերացնելու վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնումը պետական սահմանով իրականացվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և իրավական ակտերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել անձանց և տրանսպորտային միջոցների՝ պետական սահմանով բացթողնման պարզեցված կարգ:

(11-րդ հոդվածը լրաց. 26.05.21 ՀՕ-221-Ն)

Հոդված 14. Վերահսկողությունը եվ հսկողությունը պետական սահմանը հատելիս

1. Պետական սահմանի անցման կետերում մշտական վերահսկողություն և հսկողություն են իրականացնում միայն սահմանային վերահսկողություն իրականացնող սահմանապահ զորքերի զինծառայողները և մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմինները:

2. Պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռներն ու այլ գույքը ենթակա են սահմանային վերահսկողության, մաքսային հսկողության, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության:

3. Սույն օրենքի իմաստով սահմանային այլ վերահսկողությունը կամ հսկողությունը սույն օրենքով նախատեսված սահմանային վերահսկողություն և մաքսային հսկողություն չհանդիսացող պետական վերահսկողությունը կամ հսկողությունն է պետական սահմանի անցման կետերում:

4. Պետական սահմանի անցման կետերում օրենքով նախատեսված սահմանային այլ վերահսկողությունը կամ հսկողությունը իրականացնում են սահմանապահ զորքերը կամ մաքսային մարմինները տվյալ գործառույթի ոլորտը կարգավորող օրենքով ուղղակի նախատեսված լինելու դեպքում:

5. Առանձին դեպքերում օրենքով նախատեսված սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնելու նպատակով կառավարության որոշմամբ պետական սահմանի անցման կետերում ժամանակավորապես կարող են տեղակայվել օրենքով վերահսկողություն կամ հսկողություն իրականացնելու գործառույթ իրականացնող այլ պետական մարմիններ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված այլ պետական մարմինների տեղակայման կարգը, ժամկետները և առանձին դեպքերը սահմանում է կառավարությունը:

7. Սահմանային վերահսկողության և մաքսային հսկողության աշխատանքները կարող են կազմակերպվել համատեղ: Սույն մասով նախատեսված աշխատանքների համատեղ կազմակերպման կարգը սահմանում է կառավարությունը:

~~Պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռներն ու այլ գույքը ենթակա են սահմանային, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական վերահսկողության և մաքսային հսկողության:~~

~~Վերահսկողության կազմակերպման ու իրականացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:~~

~~Պետական սահմանի անցման կետերում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունն իրականացնում է սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:~~

(14-րդ հոդվածը լրաց., փոփ. 04.12.19 ՀՕ-260-Ն)

(հոդվածը 11.02.21 ՀՕ-75-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 06.08.22 թվականին)

Հոդված 25. Պետական սահմանի անցման կետերում անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), բեռների, կենդանիների և այլ գույքի տեղափոխման կարգը

Պետական սահմանի անցման կետերում անձանց, տրանսպորտային միջոցների մուտքը (ելքը), բեռների, կենդանիների և այլ գույքի տեղափոխումն իրականացվում է ~~սահմանապահ զորքերի թույլտվությամբ՝~~ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում~~:~~կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 26. Պետական սահմանի անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու կարգը

Պետական սահմանի անցման կետերում ուղևորների և բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կայանման տեղն ու տևողությունը որոշում են օդանավակայանի, երկաթուղային կայարանի, ավտոմոբիլային կայանի և տրանսպորտային կազմակերպությունների ղեկավարները՝ համաձայնեցնելով սահմանապահ զորքերի և մաքսային մարմինների հետ:

Մաքսային հսկողություն, սահմանային վերահսկողություն և օրենքով նախատեսված դեպքերում սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթ ~~այլ տեսակի վերահսկողություն~~ իրականացնելու ժամանակամիջոցում անձանց մուտքն ուղևորների և բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներ սահմանափակվում է, իսկ անհրաժեշտության դեպքում կարող է նաև արգելվել:

Հայաստանի Հանրապետությունից մեկնող և Հայաստանի Հանրապետություն ժամանող տրանսպորտային միջոցներ ուղևորների նստելն ու դրանցից իջեցնելը, ինչպես նաև բեռնումն ու բեռնաթափումն իրականացվում են սահմանապահ զորքերի և մաքսային մարմինների թույլտվությամբ:

Տրանսպորտային կազմակերպությունների պաշտոնատար անձինք, տրանսպորտային միջոցների սեփականատերերը կամ նրանց լիազորած անձինք սահմանապահ զորքերի ներկայացուցչի կամ մաքսային մարմնի պահանջով, ~~մաքսային մարմինների համապատասխան ներկայացուցիչների ներկայությամբ~~ պարտավոր են զննման նպատակով բացել կնքված վագոնները, ավտոմեքենաները, տրանսպորտային միջոցները և դրանցով տեղափոխվող բեռները:

Ուղևորների և բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները կարող են Հայաստանի Հանրապետությունից մեկնել և Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործել, ինչպես նաև փոխել կայանման տեղը միայն սահմանապահ զորքերի ~~և~~ կամ մաքսային մարմինների թույլտվությամբ:

Հոդված 27. Պետական սահմանի անցման կետերում լրացուցիչ ռեժիմային

կանոնները

Պետական սահմանի անցման կետերում առանձնացվում է տարածք, շինություն, որտեղ ուղղակիորեն իրականացվում են սահմանային~~, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական~~ վերահսկողություն, ~~և~~ մաքսային հսկողություն և օրենքով նախատեսված դեպքերում նաև սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթներ: Այդ տեղերում մտցվում են լրացուցիչ ռեժիմային սահմանափակումներ՝ սույն օրենքի 24-26-րդ հոդվածներով նախատեսված կարգի ու կանոնների սահմաններում:

Պետական սահմանում Հայաստանի Հանրապետության շահերին սպառնալիք ծագելու դեպքում սահմանապահ զորքերի հրամանատարը կարող է ժամանակավորապես դադարեցնել հաղորդակցությունը պետական սահմանի անցման կետերում:

Գ Լ ՈՒ Խ 6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հոդված 28. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների լիազորությունները պետական սահմանի պահպանության ոլորտում

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառի պետական լիազորված մարմինը՝

ա) իր իրավասության սահմաններում բանակցում է պետական սահմանի ռեժիմի պահպանման հարցերով, պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր.

բ) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական սահմանի պահպանության արտաքին քաղաքական, միջազգային-իրավական ապահովումը.

գ) իր իրավասության սահմաններում ձևակերպում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետություն մուտքի ու Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթերը.

դ) լուծում է պետական սահմանի ռեժիմի պահպանման հարցերով պետական սահմանում Հայաստանի Հանրապետության սահմանային ներկայացուցիչների կողմից չկարգավորված հարցերն ու միջադեպերը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառի պետական լիազորված մարմինը՝

ա) պետական սահմանում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման ընդհանուր համակարգում ապահովում է անձի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանությունը.

բ) սահմանային շերտում և միջազգային հաղորդակցության ուղիներում իրականացնում է քաղաքական, սոցիալ-տնտեսական ու քրեածին իրադրության վերլուծություն և կանխատեսում.

գ) ազգային անվտանգության մարմինների օպերատիվ-հետախուզական աշխատանքն ուղղում է պետական սահմանով օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, հանցավոր խմբերի և առանձին անձանց ապօրինի գործունեությունը բացահայտելուն, կանխելուն ու խափանելուն.

դ) օրենքով նախատեսված դեպքերում իրականացնում է սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթներ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի պետական լիազորված մարմինը՝

ա) ապահովում է պետական սահմանի օդային տարածքի պաշտպանությունը.

բ) ապահովում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մասնակցությունը պետական սահմանի պահպանությանը՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

գ) իր իրավասության սահմաններում աջակցում է սահմանապահ զորքերին ռեսուրսային (պաշարային), հետախուզական ու պետական սահմանի պահպանության և այլ հարցերում:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառի պետական լիազորված մարմինը՝

ա) իր իրավասության սահմաններում աջակցում է սահմանապահ զորքերին պետական սահմանի պահպանության ոլորտում ռեժիմային միջոցառումներ իրականացնելիս, պետական սահմանում հակահիրավական գործունեության դեմ պայքարելիս, պետական սահմանի ռեժիմը խախտողներին որոնելիս, վարչական ձերբակալման ենթարկված անձանց կատարած իրավախախտումները քննելիս.

բ) սահմանապահ զորքերի ներկայացմամբ պետական սահմանը խախտողներին որոնելիս, զինված ներխուժումը կամ սահմանակից պետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածք զանգվածային ներխուժումը հետ մղելիս, ապահովում է տեղանքի առանձին տեղամասեր անձանց մուտքի ժամանակավորապես սահմանափակումը կամ արգելումը, արտակարգ իրավիճակների ժամանակ սահմանային գոտում (օդանավակայաններում, երկաթուղային, ավտոմոբիլային կայաններում և այլ օբյեկտներում) ապահովում է հասարակական կարգը.

գ) սահմանային գոտում սահմանապահ զորքերի հետ համատեղ մասնակցում է բնակչության իրավական դաստիարակությանը, պետական սահմանում և պետական սահմանի անցման կետերում իրավախախտումների կանխման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներին:

Հայաստանի Հանրապետության մաքսային հսկողության բնագավառի պետական լիազորված մարմինը՝

ա) իրականացնում է մաքսային հսկողություն.

բ) օրենքով նախատեսված դեպքերում իրականացնում է սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթներ:

(28-րդ հոդվածը փոփ. 20.03.07 ՀՕ-138-Ն)

Հոդված 33. Համագործակցությունը պետական սահմանը պահպանելիս

Սահմանապահ զորքերը և հակաօդային պաշտպանության զորքերը միմյանց օժանդակում են պետական սահմանի պահպանությունն իրականացնելիս, իրենց իրավասությունների սահմաններում համաձայնեցնում են պետական սահմանի ռեժիմի տարբեր տեսակի վերահսկողություն իրականացնող ~~այլ~~ պետական մարմինների գործողությունները՝ չմիջամտելով այդ գործողություններին:

Սահմանապահ զորքերը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համաձայն, համագործակցում են սահմանակից պետությունների համապատասխան մարմինների հետ: